«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 8 - 2

6 ապրիլի 2020 թվականի (հարցման կարգով)

«Ամբերդ» հետազոտական կենտրոնի
2020 թվականի գործունեության ծրագիրը հաստատելու մասին

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 6-ի N 1718-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 17-րդ կետի 8-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Ամբերդ» հետազոտական կենտրոնի 2020 թվականի գործունեության ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**

2020 թ. ապրիլի 6
Երևան

Հավելված

«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի՝
2020 թվականի ապրիլի 6-ի N 8 - 1 որոշման

«ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը մշակվել է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհրդի՝ 2020 թվականի ապրիլի 6-ի N 8 - 1 որոշմամբ հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2024 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման ռազմավարական ծրագրի» ուղղություններից և զարգացման գերակայություններից: Վերը նշված որոշմամբ ամրագրված գերակայությունները կենսագործելու նպատակով 2020 թվականին «Ամբերդ» հետազոտական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) գործունեության հիմնական ուղղությունները պետք է լինեն.

- երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանն ուղղված հետազոտությունների իրականացումը,
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման արդյունավետ գործիքակազմի մշակմանն ուղղված հետազոտությունների իրականացումը,
- կրթական համակարգի զարգացմանը և միջազգայնացմանն ուղղված հետազոտությունների և վերլուծությունների իրականացումը,
- մասնավոր հատվածի զարգացմանը և մրցունակության բարձրացմանն ուղղված հետազոտությունների իրականացումը:

Կենտրոնը 2020 թվականի գործունեությամբ նախատեսում է հասնել հետևյալ հիմնական արդյունքներին՝

1. ՀՀ գործադիր և օրենսդիր մարմինների, ինչպես նաև մասնավոր հատվածի հետ համագործակցության ընդլայնում,
2. Կենտրոնի ճանաչելիության բարձրացում հանրության շրջանում,
3. միջազգային համագործակցության ընդլայնում, այդ թվում՝ արտաքին ֆոնդերից դրամաշնորհային միջոցների ներգրավման միջոցով:

ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հրապարակման ենթակա հետազոտություններ

1.1. Մրցույթով, ներբուհական միջոցներով հետազոտություններ

Մրցույթով, ներբուհական միջոցներով հետազոտությունները կիրականացվեն Համալսարանի գիտական խորհրդի՝ 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N 1 որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտական թեմաների և հետազոտական խմբերի ձևավորման, դրանցում ասպիրանտների և ուսանողների ներգրավման կարգին» համապատասխան: **Մրցույթի թեմաները կորոշվեն հետևյալ կառուցակարգով.** Կենտրոնի աշխատակազմի կողմից կիրականացվեն ներքին շահառուների հետազոտական կարիքների վերհանման քննարկումներ, որոնց արդյունքների ամփոփմամբ ձևավորվում են առաջարկվող հետազոտական թեմաների ցանկը, դրանց արդիականության հիմնավորումները, կատարման ընթացքին, բովանդակությանը, հրապարակմանը, հանրայնացմանն առնչվող տեխնիկական առաջադրանքների նախագծերը և ներկայացվում Կենտրոնի Փորձագիտական խորհրդի հաստատմանը: Հետազոտական թեմաների հաստատման հարցերով հրավիրված Փորձագիտական խորհրդի նիստերը հրապարակային են: Կենտրոնի մասնագիտացման հիմնական բնագավառներն են մակրոտնտեսական կայունության, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության, արտաքին հատվածի, ֆինանսական շուկաների և ինստիտուտների, մրցունակության, շուկաների, մրցակցության, գների և գնաճի, հանրային քաղաքականության, գործարարության, վարչարարության, կրթական գործընթացի կազմակերպման և կրթական տեխնոլոգիաների հետ կապված, ինչպես նաև

տնտեսության զարգացման համար հետաքրքրություն ներկայացնող, այդ թվում՝ միջգիտակարգային բնույթի այլ ուսումնասիրությունները:
Նախատեսվում է ներքին շահառուների կարիքների վերհանման և քննարկման արդյունքով մրցույթով իրականացնել 3-4 հետազոտական թեմաներ:

1. 2. Մրցույթով, արտաքին ֆոնդերի ներգրավմամբ հետազոտություններ

2019 թվականի նոյեմբերից մեկնարկած ֆոնդահայթայթման աշխատանքները կշարունակվեն հետևյալ ուղղություններով.

- **Անդամակցություն միջազգային կառույցներին և մասնակցություն թեմատիկ սեմինարներին, կոնֆերանսներին:** 2019 թվականին համագործակցության և (կամ) ֆինանսավորման առաջարկով դիմած 25 կազմակերպություններից աշխատանքը շարունակվում է 4 կազմակերպության հետ.

  Atlas Network, Centre for International Governance Innovation, European Policy Centre և **Ecologic Institute:**

  «Atlas Network»-ը տրամադրում է ինչպես ֆինանսավորում, այնպես էլ կազմակերպում է տարաբնույթ դասընթացներ, կոնֆերանսներ Think Tank-երի ներկայացուցիչների համար: Այսպես՝ 2020 թվականի հունվարի 13-ից Վարդան Աթոյանը և Տաթև Եղյանը մասնակցելու են Think Tank Navigator առցանց դասընթացին:
- **Հետազոտական նախագծերի պատրաստում պոտենցիալ ֆոնդերին ներկայացնելու համար:** Կենտրոնի հետազոտողների, ինչպես նաև համալսարանի որոշ ամբիոնների մասնակցությամբ կմշակվեն ծրագրային սեղմագրեր հետևյալ ֆոնդերի հնարավոր մրցույթներին ներկայացնելու համար՝ OECD, Atlas Network, COST, Marie Curie:
- **Մասնակցություն միջազգային և տեղական մրցույթներին: Horizon 2020**-ի շրջանակում կներկայացվի հետազոտական-նորարարական նախագիծ հետևյալ թեմայով.

«Համալիր հետազոտությունների իրականացում ագրոարդյունաբերական և թափոնների կառավարման ոլորտում շրջանաձև տնտեսության անցումային մոդելի մշակման նպատակով հյուսիսային Հայաստանի երեք մարզերում»:

Բյուջե՝ 3.000.000 եվրո:

Spencer հիմնադրամին կներկայացվի հետազոտական նախագիծ «Շարունակական կրթության ամերիկյան փորձի տեղայնացման հնարավորությունները ՀՀ-ում՝ տնտեսագիտության ոլորտում» թեմայով:

Բյուջե՝ 250, 000 ԱՄՆ դոլար:

Volkswagen հիմնադրամին կներկայացվի «Աշխատաշուկայի մարտահրավերներն արհեստական բանականության ներկայիս աճի պայմաններում» թեմայով նախագիծ:

Բյուջե՝ 1.500.000 եվրո:

Մանուկյան Սիմոն հետազոտական հիմնադրամին կներկայացվի «Հայաստանում ինովացիոն էկոհամակարգի զարգացում. ՓՄՁ-ների արդի վիճակի և ներդրումային հեռանկարների ուսումնասիրում» թեմայով նախագիծ:

1. 3. «Ամբերդ» տեղեկագրի պարբերական հրապարակում

2019 թվականին լույս է տեսել «Ամբերդ տեղեկագիր» գիտահանրամատչելի պարբերական հանդեսի անդրանիկ համարը: Պարբերականը լույս կտեսնի տարեկան 6-անգամյա պարբերականությամբ և ուղղված կլինի տնտեսության առջև ծառացած առավել արդիական խնդիրները պարզ ու հանրամատչելի լեզվով ընթերցողների լայն շրջանակին ներկայացնելուն: Մեր կարծիքով՝ այն էապես կնպաստի նաև բուհի մասնագիտական ներուժի արդյունավետ ու նպատակային օգտագործմանը, նորանոր խնդիրների բացահայտմանը, դրանով իսկ հիմք ստեղծելով մեր երկրի զարգացման տեսլականի ու սցենարների շուրջ մտքերի ներկայացմանն ու բաց քննարկմանը: Պարբերականում հրապարակվող նյութերը հիմնականում կզետեղվեն հետևյալ խորագրերի ներքո՝ տնտեսության «զարկերակ», մակրոտնտեսական «բարոմետր», ֆինանսական համակարգ, հարկաբյուջետային շրջանակ, տարածքային զարգացում, կրթություն, նորարարություն, գիտելիք, սոցիալական

քաղաքականություն, ագրարային քաղաքականություն, շուկաներ և մրցակցություն, Հայաստան-Սփյուռք, Հայաստան-Արցախ, Հայաստան և աշխարհ, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխություն, անվտանգություն և մարտահրավերներ, հայ հասարակության տեսլականը, ինչպես նաև արձագանք արդիական ամանատարբեր հիմնախնդիրներին:

1. 4. Կենտրոնի ճանաչելիության բարձրացում, կայքի ստեղծում և ամփոփ վերլուծություններ

Կենտրոնն էապես կարևորում է միջազգային կապերի զարգացման գործառույթը և օժանդանդակությունըՀամալսարանի միջազգայնացմանը:

Հստակ պարբերականությամբ կիրականացվեն աշխատանքներ, որոնք կնպաստեն միջազգային հարթակներում Կենտրոնի ճանաչելիության բարձրացմանը (այդ թվում՝ միջազգային համացանցային տարաբնույթ մասնագիտական շտեմարաններում Կենտրոնի գրանցում, տվյալների պարբերական թարմացում, համապատասխան փորձագետների հետ տեղեկատվության փոխանակում, համաշխարհային վարկանի-շավորող հաստատության հետ մշտական կապի ապահովում և այլն):

Հանրության շրջանում Կենտրոնի ճանաչելիության բարձրացման տեսանկյունից կարևորվում է՝

- Կենտրոնի պաշտոնական կայքի ստեղծումը,
- սոցիալական ցանցում Կենտրոնի գործունեության լուսաբանման ակտիվացումը,
- ՀԼՄ-ների հետ համագործակցության ընդլայնումը:

2020 թվականին Կենտրոնում կներդրվի ոլորտային ամփոփագրերի և թեմատիկ զեկույցների պատրաստման գործառույթը: Բացի այդ, կներդրվի հանրային արձագանք ստացած տարբեր հարցերի վերաբերյալ Կենտրոնի հետազոտողների հակիրճ մեկնաբանությունների (comments)՝ արագ արձագանքման գործառույթ ներդնելու, ինչպես նաև YouTube տեսահոսթինգային կայքում Կենտրոնի պաշտոնական էջի (AMBERD TV) բացման, թեմատիկ հարցազրույցների անցկացման, մասնագիտական տեսանյութերի պատրաստման ու տեղադրման հնարավորությունները:

Ընդհանուր առմամբ՝ Կենտրոնի ընթացիկ հետազոտությունների հետ կապված ներդրվելու է առկա տնտեսական հիմնախնդիրներին մեր արագ արձագանքի պրակտիկան՝ կարճ հետազոտությունների տեսքով: Մասնավորապես՝ ԱՎԾ-ի (և ոչ միայն) կողմից ամսական հրապարակումների տարբեր թեմաների մասով կներկայացվեն Կենտրոնի կարճ մոտեցումները: Վիճակագրական տարբեր աղբյուրների անընդհատ ուսումնասիրությունը ոչ միայն կապահովի ընթացիկ հետազոտության անընդհատությունը, այլ նաև կծնվեն թեմաներ միջնաժամկետ և երկրաժամկետ հետազոտությունների համար: Բացի այդ, Կենտրոնը ամփոփված և կտրված չի լինի արդի հիմնախնդիրներից և դրանով մեծ հետաքրքրություն կապահովի իր հետազոտությունների նկատմամբ:

Կենտրոնի կայքի ստեղծում

Կայքի գործարկումից առաջ ենթադրվում է.

- ✓ կայքի բոլոր բաժինների, դրանցում տեղադրվող տեղեկատվության ձևաչափի, ոլորտային ուղղվածությունների, պարբերականության նախօրոք հստակ որոշված լինելը,
- ✓ կայքի առաջմղման, դրա բոլոր բաժիններում ըստ ձևաչափի, ուղղությունների, պարբերականության (մոտավոր) տեղեկատվության տրամադրման և կայքի հետ կապված ցանկացած այլ գործառույթի հստակ սահմանազատում աշխատակիցների շրջանում՝ կայքի արդյունավետ գործարկման տեսանկյունից,
- ✓ կայքի բոլոր բաժինների լիարժեք գործունեության համար անհրաժեշտ մասնագետների առկայություն:

Այսպիսով՝ կայքի գործարկումը 2020 թվականին արդյունավետ կլինի միայն վերոնշյալ բոլոր կետերի լուծման դեպքում:

2. Արտաքին ֆոնդերի ներգրավմամբ կրթական ծրագրերի մշակում և համակարգում

Կրթական ծրագրերի ֆոնդահայթայթման համար նախատեսվում է.

- ՀՊՏՀ միջազգային բաժնի հետ համատեղ ներկայացնել նախագիծ «Erasmus + KA2 – Cooperation for Innovation and the Exchange of Good Practices – Capacity Building in the Field of Higher Education» մրցույթի շրջանակում: Նախագիծը հիմնականում ուղղված կլինի համալսարանի գիտահետազոտական անձնակազմի հմտությունների և կարողությունների զարգացմանը:
- Կրթական-հետազոտական ծրագրի ներկայացում «Visegrad Foundation»-ի հայտարարած մրցույթին: Ծրագիրը պետք է ներկայացվի վիշեգրադյան չորս երկրներից (Չեխիա, Հունգարիա, Լեհաստան, Սլովակիա) գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ:

Աշխատանքներ կտարվեն նաև տարբեր գիտական, կրթական միջոցառումների բացահայտման և հետազոտողների մասնակցությունը դրանցում ապահովելու ուղղությամբ (օրինակ՝ գտնել ֆինանսավորում ճանապարհածախսը հոգալու համար):

3. Հիրապարակվող հետազոտություններ

3. 1. 1. Համագործակցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ

Համալսարանը համապատասխան առաջարկներով դիմել է Հայաստանի Հանրապետության Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհուրդ, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի, ֆինանսների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության նախարարություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ Կենտրոնի հետազոտական ուղղությունների շրջանակներում ներկայացնելու իրենց կանոնադրական գործառույթներին առնչվող հետազոտական թեմաներ:

Հետազոտական թեմաներն ամբողջացնելուց, համապատասխան շահառուների հետ քննարկելուց հետո դրանք կներկայացվեն Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը և սահմանված կարգին համապատասխան կհայտարարվեն մրցույթներ:

2019 թվականին ստորագրված հուշագրերի շրջանակներում կշարունակվի համագործակցությունը Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետա-յին հարցերի մշտական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, այլ մարմինների և կազմակերպությունների հետ:

Համագործակցության առաջնահերթ ուղղություն կդիտարկվի նաև Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրերի և ռազմավարությունների իրականացման նկատմամբ մշտադիտարկումը և բարելավվման ուղղությամբ առաջարկների ներկայացումը, ինչպես նաև հանրային քաղաքականության մարտահրավերների ու բացերի ուսումնասիրությունը: Կենտրոնի կողմից առանձնահատուկ ուշադրության կարժանանան Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացված՝ հանրային հնչեղություն պարունակող իրավական ակտերի նախագծերը:

3. 1. 2. Մասնավոր պատվերով հետազոտություններ

Կենտրոնի հեղինակության բարձրացման, ինչպես նաև արտաքին մասնավոր շահակիցների որոնման դաշտում կենտրոնի հետազոտական առաջարկի առավել արդյունավետ դիրքավորման նպատակով 2020 թվականին անհրաժեշտ է լուծել Կենտրոնի սեփական կայքի ձևավորման, ներկայացուցչական ծախսերում ոլորտային ցուցահանդեսներին մասնակցության ծախսերի ներառման, ինչպես նաև «Սփյուռ» և այլ տեղեկատվական համակարգերում Կենտրոնի հետազոտական առաջարկի փաթեթի ձևավորման և գրանցման խնդիրները: Մասնավորապես՝ տեղեկատվական համակարգերում Կենտրոնի հետազոտական առաջարկի առավել

ընդգծման նպատակով նպատակահարմար է սեփական առաջարկը տեղակայել վերջինի գործունեության դասակարգչի հետևյալ դաշտերում՝ տեղեկատվություն, հետազոտություններ, մշակումներ, կրթություն, ծառայություններ, զարգացման ծրագրերի մշակում և իրականացում ուղություններում:

Մասնավոր հատվածի ներգրավմամբ Կենտրոնի գործունեության ուղղություններից 2020 թվականին դիտարկվում է պետություն-մասնավոր հատված համագործակցության ծրագրերի մշակումը: Հաշվի առնելով, որ տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրերի առավել արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ՝ ուղղված ֆինանսական գործիքների ներդրմանը, կառավարման համակարգերի բարելավմանը, արտադրական կարողությունների ընդլայնմանը, տնտեսության արտադրողական ներուժի զարգացմանը, տեխնոլոգիական առաջընթացին և օտարերկրյա ներդրումների խթանմանը Կենտրոնը կարող է մշակել և ներկայացնել ՊՄՀԳ ծրագրեի նախագծեր:

3. 1. 3. Ներբուհական օգտագործման հետազոտություններ

4. Դասընթացների անցկացում

Դասընթացների անցկացում հասարակության մի քանի շերտերի համար (ուսանողներ, մասնագիտական հանրություն և առհասարակ, թեմայով հետաքրքրված անձինք): Նախատեսվում է դասընթացներ կազմակերպել տնտեսական դիվանագիտության վերաբերյալ: Ընդ որում՝ նպատակային լսարանը պետք է լինեն պետական համակարգի աշխատակիցները և համակարգում աշխատել ցանկացողները: Դասընթացի նպատակը պետք է լինի պետական կառավարման համակարգի աշխատակիցներին այդ գիտելիքներով զինելը:

Կենտրոնի հիմնական առաքելության արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նպաստել ակադեմիական շրջանակներում որակյալ մտավոր արտադրանքի թողարկմանը, դասախոսական կազմի համար թրեյնինգների կազմակերումը, մագիստրատուրայի ուսանողների շրջանակից ընտրել խումբ (8-10 հոգանոց) և նրանց հետ կազմակերպել հատուկ դասընթացներ՝

տնտեսագիտական վերլուծության հմտությունների գործիքակազմի կատարելագործման նպատակով:

Ընթացիկ ակտիվությունը ապահովելու համար առաջարկում եմ TEDTalk-երի տրամաբանությամբ տնտեսագետների ելույթների կազմակերպումը, տնտեսագիտական թեմաներով զրույցների, բանավեճերի, խաղերի կազմակերպումը, հեղինակավոր պարբերականների հրապարակումների վերաբերյալ քննարկումների կազմակերպումը:

Կենտրոնի միջազգային ճանաչողությունը բարձրացնելու համար կարելի է ամենամյա միջազգային սեմինար կազմակերպել, հրավիրել բանախոսներ ՀՊՏՀ-ի հետ համագործակցող համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմից, հաջողակ շրջանավարտներին և խորագրից կախված ընտրել թիրախային երկրները ու բաց հայտադիմումներով ընտրել մասնակիցներին:

5. Տվյալների բազայի ստեղծում

Նախատեսվում է 2020 թվականին ստեղծել տվյալների բազա, որը հնարավորություն կտա Համալսարանի բոլոր շահառուներին անվճար օգտվել համաշխարհային տնտեսությանը և Հայաստանի տնտեսությանը վերաբերող լայնածավալ տեղեկատվական ռեսուրսից և իրականացնել բազմաբնույթ հետազոտություններ: Տվյալների բազան իրենից կներկայացնի վիճակագրական տվյալների մուտքագրման, պահպանման, ելքագրման և գրաֆիկական պատկերների կառուցման հարթակ, եռալեզու՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, աշխատելու հնարավորությամբ: Հարթակն օժտված կլինի ամբողջական ծրագրային ապահովման փաթեթով, կամ կներառի անժամկետ օգտագործման լիցենզիայի տրամադրման ծառայություն:

Հարթակը բաղկացած կլինի 3 հիմնական բաղադրիչներից՝ Հանրային համակարգ, Կառավարման համակարգ և Օգտատիրոջ համակարգ: Տվյալների հետագա մուտքագրման աշխատանքները կապահովվի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ուժերով:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Գալոյան**